ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29 հոկտեմբերի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/1Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1-ԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 55 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալները, աշխատակազմի իրավաբանական, կազմակերպական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը, Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ Իմ քայլը կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Սրբուհի Ղազարյանը, Տրդատ Սարգսյանը, Նիկոլայ Բաղդասարյանը, Վահագն Հովակիմյանը և Վիկտոր Մնացականյանը ներկայացրել են դիմումներ ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.10.2018թ. արձանագրությունների համաձայն՝ Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ Արմեն Գալջյանին, Արփենիկ Մարությանին, Վահե Գևորգյանին, Գրիգորի Երիցյանին, Մարատ Թոխյանին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը նիստի մասնակիցներին ներկայացրեց Երևանի նորընտիր ավագանու խմբակցությունների ղեկավարների և խմբակցությունների քարտուղարների անուն, ազգանունները.

1. Սուրեն Էյրամջյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար
   Հասմիկ Խաչունց - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

2. Արման Աբովյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
   Հռիփսիմե Առաքելյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

3. Դավիթ Խաժակյան -Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
   Անի Խաչատրյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթ ունեցավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը և առաջարկեց օրակարգում ընդգրկված «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու իրավական ակտի նախագիծը հանել քննարկումից:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 1-ին նստաշրջանի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը.

1) Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին.

3) Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին.

4) Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին.

5) Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին.

6) Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Արման Աբովյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
2. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

«Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու իրավական ակտի նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Աշոտ Մնացականյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ սակայն առաջարկվում է եռամսյա ժամկետում պարտադիր կերպով վերանայել հաստիքացուցակը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Արման Աբովյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
3. Գայանե Աբրահամյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Դավիթ Խաչատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Լևոն Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դ. Խաժակյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

1) Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը,

հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 16-Ա որոշման 1-ին կետը:

3. Սույն որոշումը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51 , դեմ՝ 3, ձեռնպահ՝1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ** - Հրաչյա Սարգսյանին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
2. Արման Աբովյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
3. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Հրաչյա Սարգսյանին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու անդամ Հրաչյա Սարգսյանին նշանակել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝52 , դեմ՝1 , ձեռնպահ՝2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ** - Հայկ Սարգսյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Արման Աբովյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
3. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
4. Անի Սամսոնյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Հայկ Սարգսյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1.Գայանե Աբրահամյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայկ Սարգսյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51 , դեմ՝1 , ձեռնպահ՝3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. **ԼՍԵՑԻՆ –** Սերգեյ Հարությունյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին։

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1.Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Անի Սամսոնյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Ս. Հարությունյանը։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Սերգեյ Հարությունյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել։

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սերգեյ Հարությունյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝49 , դեմ՝1 , ձեռնպահ՝4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. **ԼՍԵՑԻՆ** - Տիգրան Վիրաբյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին։

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Հասմիկ Խաչունց-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
3. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
5. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Էռնեստ Ավանեսով - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Արմեն Ղալեչյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
8. Սերգեյ Սարգսյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Տ.Վիրաբյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Տիգրան Վիրաբյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տիգրան Վիրաբյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48 , դեմ՝ 3 , ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Աշոտ Մնացականյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու իրավական ակտի նախագծի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն՝ քանի որ հարցի քննարկման և ուսումնասիրման համար առկա չեն անհրաժեշտ տեղեկատվություն և ժամկետներ:

Նախագծի վերաբերյալ հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ:

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Հաշվի առնելով Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դ.Խաժակյանի առաջարկությունը և Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունը, Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ հարցը չի քննարկվել և հանվել է օրակարգից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան